ԺԻՐԱՅՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ

ԴԻՔՍՕՆ ԿՂԶԻՆ[1]

Դրամատիկական Պատմուածք

[ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ] *

ՄԱՅՐ
ՍԵԴԱ
ԱՐՓԻԿ
ԱՇՈՏ
ԱՆՇԱՆՕԹ

---

* *Յանկը կազմուած է մեր կողմից: (Ծ. Խ.)*

Գիւղական տան բակ։

Դարաւոր թթենու տակ՝ կարպետով ծածկուած թախտ, սեղան, մի քանի հնամաշ աթոռ։

Դիմացը՝ քարէ սանդուղք, պատշգամբ։

Մի կողմում՝ ճաղաւոր ցանկապատ, բակի դուռը, միւս կողմում՝ այգի։

Սեղան թախտին թիկնած կարդում է։

Պատշգամբից դանդաղ իջնում է մայրը։

ՄԱՅՐ - *Եղբայրդ չեկաւ։*

ՍԵԴԱ - (Սթափուելով)։ *Հը՞։*

ՄԱՅՐ - *Աչոտը չեկաւ։*

ՍԵԴԱ - *Կը գայ, մայրիկ, դեռ շուտ է։*

ՄԱՅՐ - *Գիտի, որ անհանգստանում ենք, գոնէ զանգահարէր։*

ՍԵԴԱ - *Գուցէ չի կարողացել։*

ՄԱՅՐ - *Չի կարողացել... Պարզապէս անտարբեր է, անփոյթ...*

ՍԵԴԱ - *Ուր որ է՝ կը գայ, մայրի՛կ, մի՛ անհանգստանայ։*

ՄԱՅՐ - *Իսկ քեզ ի՞նչ է պատահել։*

ՍԵԴԱ - *Ի՞նձ... Ոչի՛նչ։*

ՄԱՅՐ - *Աչքերդ կարծես արցունքոտ են։*

ՍԵԴԱ - *Կարդում էի։*

ՄԱՅՐ - *Տխո՞ւր բան է։*

ՍԵԴԱ - *Կարծես հայրիկի մասին գրուած լինի։*

ՄԱՅՐ - *Մե՞ր հայրիկի։*

ՍԵԴԱ - *Ը՛հը։ Լսի՛ր, մայրիկ։*

ՄԱՅՐ - *Բայց ես ուշացել եմ։*

ՍԵԴԱ - *Երկար չի, մայրիկ։ Ընդամէնը մի քանի տուն է, լսի՛ր։* (Կարդում է՝ արցունքները կուլ տալով)։

Մի հեռաւոր, մի անանուն բլրի լանջի
Հին չիրմաթումբ է կանաչում.
Այնտեղ անայայտ մի զինուոր է յաւէտ ննջում,
Արցունքի պէս ցօղն է շողում ալ կակաչին,

Հովը տխուր ինչ-որ բառեր է մրմնջում
Այն հեռաւոր, այն անանուն բլրի լանջին:
Յուչ են դարձել դժուար օրերը նահանջի,
Սպիացել վէրքերը խոր,
Բայց ինչ-որ տեղ, խաղաղ գիւղում մի հեռաւոր
Նկարի մօտ ծաղիկները չեն թառամում,
Ու յիշում են, չեն մոռանում՝
Հրաժեշտի համբոյրը ջերմ,
Յուսադրող ու գուրգուրող խօսքը վերջին...
... Կը գան մի օր, կը գան նրանք, ծունկի կ'իջնեն
Այն հեռաւոր, այն անանուն բլրի լանջին:

ՄԱՅՐ - (Հառաչանքով): *Այո՛, կարծես հայրիկի մասին գրուած լինի:*

ՍԵԴԱ - *Մենք էլ չգիտենք, թէ որտեղ է նրա շիրիմը... Գոնէ մի բուռ հող տանէինք Հայաստանից, ծաղիկներ տանէինք...*

ՄԱՅՐ - (Աչքերը սրբելով): *Ո՞վ իմանայ որտեղ է, որ եղբայրական գերեզմանում:*

ՍԵԴԱ - *Հարկաւոր է փնտրել:*

ՄԱՅՐ - *Շատ եմ փնտրել, շատ տեղեր եմ գրել, հետաքրքրուել, բայց ոչ ոք չգիտի:*

ՍԵԴԱ - *Մայրիկ... Իսկ կարո՞ղ է պատահել...* (Լռում է):

ՄԱՅՐ - *Ի՞նչ:*

ՍԵԴԱ - *Որ հայրիկը ողջ լինի: Ասում են...*

ՄԱՅՐ - *Չէ՛, աղջիկս... Նա քաջի մահով ընկել է հէնց առաջին մարտում... Քառասուներկու թուականի դեկտեմբերին մենք նամակ ստացանք զօրամասի հրամանատարից... Դու տեսել ես այդ նամակը:*

ՍԵԴԱ - *Տեսել եմ...*

ՄԱՅՐ - *Այդպէս էլ գրուած է՝ քաջի մահով...*

ՍԵԴԱ - *Գոնէ այդ հրամանատարին գտնէինք:*

ՄԱՅՐ - *Նա էլ է զոհուել քաջի մահով... Նրանց զօրամասից քչերն են ողջ մնացել:*

ՍԵԴԱ - *Մի՞թէ անհնար է գոնէ մէկին գտնել, մի զինուորի, որ տեսել է հայրիկին, որ վերջին պահին...*

ՄԱՅՐ - *Մի՛ մտածիր, աղջիկս: Քո հայրիկի գերեզմանը գիւղի կենտրոնում բարձրացող յուշարձան-աղբիւրն է... Այնտեղ՝ գրանիտէ պատի վրայ, պատերազմում ընկած միւս քաջերի անունների կողքին փորագրուած է նաեւ քո հայրիկի անունը:*

ՍԵԴԱ - *Այո՛, փորագրուած է...*

ՄԱՅՐ - *Դուք պէտք է հպարտանաք ձեր հօրով... Նա կամաւոր մեկնել է ռազմաճակատ եւ իր կեանքը զոհաբերել յանուն հայրենիքի: Այդպիսի մահը հազար կեանք արժէ....*

ՍԵԴԱ - (Մտախոհ) ... *Մահ իմացեալ անմահութիւն է:*

ՄԱՅՐ - *Այո՛:*

ՍԵԴԱ - *Մայրիկ, դու լա՞ւ ես յիշում հայրիկին:*

ՄԱՅՐ - *Լաւ եմ յիշում:*

ՍԵԴԱ - *Իսկ ես չեմ յիշում: Ուզում եմ յիշել, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում:*

ՄԱՅՐ - *Ինչպէ՞ս կարող ես յիշել... Դու երկու ամսական էիր, երբ հայրդ գնաց:*

ՍԵԴԱ - *Իսկ հիմա տասնեօթ տարեկան եմ:*

ՄԱՅՐ - *Այո՛, մեծ աղջիկ ես, արդէն հասունութեան վկայականի քննութիւններ ես յանձնում...* (Շոյում է աղջկայ մազերը): *Եթէ հայրդ տեսնէր՝ ինչպէս ես մեծացել...*

ՍԵԴԱ - *Մի հեռաւոր, մի անանուն բլրի լանջի...*

ՄԱՅՐ - *Դէ լաւ, պարապի՛ր, պարապի՛ր, քիչ է մնացել...* (Համբուրում է աղջկան ու քայլում դէպի բակի դուռը) *Հա՛, եղբայրդ որ երեւայ, թող գայ ինձ մօտ: Ես գրասենեակում կը լինեմ:*

Մայրը գնում է:

Սեդան մի պահ նայում է նրա ետեւից, կարծես ուզում է կանչել, ինչ-որ բան ասել, բայց լռում է ու նորից ձեռքն է առնում գիրքը:

ՍԵԴԱ - *Մի հեռաւոր, մի անանուն բլրի լանջի...* (Փակում է գիր-

քը. մտախոհ) *Մի՞թէ իսկապէս անհնար է գտնել հայրիկի չիրիմը... Հարկաւոր է փնտրել, փնտրել...*

Չրխկոցով բացւում է բակի դուռը: Ներս է վազում Արփիկը:

ԱՐՓԻԿ - *Բարի լոյս, Սեդա:*

ՍԵԴԱ - *Բարի լոյս, Արփիկ: Ուշ ես գալիս:*

ԱՐՓԻԿ - *Սկսե՞լ ես արդէն:*

ՍԵԴԱ - *Չէ՛, ուրիշ բան էի կարդում:*

ԱՐՓԻԿ - *Իսկ ինչո՞ւ ես տխուր:*

ՍԵԴԱ - *Յիշեցի հայրիկիս...*

ԱՐՓԻԿ - *Իմ հայրն էլ է երբեմն յիշում նրան եւ... էլի տխրում է... Ախր նրանք լաւ ընկերներ են եղել, միասին են աշխատել եւ նոյն օրն էլ գնացել են ռազմաճակատ... Ափսոս, որ նոյն զօրամասում չեն կռուել...*

ՍԵԴԱ - *Գիւղում չատերն են յիշում հայրիկին:*

ԱՐՓԻԿ - *Յիշում են եւ հպարտանում: Նա... նա իսկական հերոս է եղել... ե՛ւ աշխատանքում, ե՛ւ...* (Յանկարծ կարծես ինչ-որ բան է յիշում): *Լսի՛ր, Սեդա, այսօր ձեր տուն ոչ ոք չի՞ եկել:*

ՍԵԴԱ - *Իսկ ո՞վ պիտի գար:*

ԱՐՓԻԿ - *Ուրեմն՝ չի եկել:*

ՍԵԴԱ - *Ո՞վ:*

ԱՐՓԻԿ - *Մի անծանօթ մարդ ձեր մասին էր հարցնում:*

ՍԵԴԱ - *Մե՞ր մասին:*

ԱՐՓԻԿ - *Քո, եղբօրդ:*

ՍԵԴԱ - *Իսկ որտեղի՞ց գիտէր մեր մասին:*

ԱՐՓԻԿ - *Չգիտեմ:*

ՍԵԴԱ - *Գուցէ...* (Լռում է՝ ինչ-որ մտքով տարուած):

ԱՐՓԻԿ - *Գուցէ ձեր բարեկամներից էր, ազգականներից:*

ՍԵԴԱ - *Հայրս ազգականներ չունի, որբ է եղել... Նրա բոլոր հարազատներին կոտորել են տասնհինգ թուականին... Հայրս փոքր է եղել, ռուս գինուորներն են փրկել նրան...*

ԱՐՓԻԿ - *Գուցէ մայրիկիդ ազգականներից է եղել:*

ՍԵԴԱ - *Գուցէ: Իմացել է, որ մայրիկը գրասենեակում կը լինի եւ գնացել է այնտեղ:*

ԱՐՓԻԿ - *Ես ասացի, որ մայրիկդ գրասենեակում կը լինի, բայց նա այնտեղ չգնաց:*

ՍԵԴԱ - *Չգնա՞ց...*

ԱՐՓԻԿ - *Չգնաց, ես տեսայ, քայլեց այգիների կողմը:*

ՍԵԴԱ - *Իսկ տան տեղը չհարցրե՞ց:*

ԱՐՓԻԿ - *Հարցրեց: Ինձ թւում էր, թէ նա տուն կը գայ... Գուցէ դեռ կը գայ: Եթէ չէր գալու, ինչո՞ւ էր հարցնում:*

ՍԵԴԱ - *Զարմանալի է... Ուրեմն՝ անծանո՞թ էր:*

ԱՐՓԻԿ - *Անծանոթ էր, բոլորովին անծանոթ: Ես առաջին անգամ էի տեսնում նրան:*

ՍԵԴԱ - *Այդ դէպքում գուցէ...*

ԱՐՓԻԿ - *Գուցէ ի՞նչ:*

ՍԵԴԱ - *Բայց մի՞թէ հնարաւոր է:*

ԱՐՓԻԿ - *Ի՞նչը:*

ՍԵԴԱ - *Որ նա լուր է բերել:*

ԱՐՓԻԿ - *Ումի՞ց:*

ՍԵԴԱ - *Հայրիկից:*

ԱՐՓԻԿ - *Բայց նա...*

ՍԵԴԱ - *Գիտեմ՝ ինչ ես ուզում ասել...*

ԱՐՓԻԿ - *Ո՛չ, ո՛չ:*

ՍԵԴԱ - *Այո՛, հայրիկը զոհուել է, բայց... գուցէ նրա ռազմաճակատային ընկերներից մէկն է փնտրել ու գտել մեզ... Ամէն տեղ դեռ փնտրում են, գտնում... Գիտե՞ս այսօր կարդում էի այդ բանաստեղծութիւնը եւ մտածում էի... Մենք չգիտենք նոյնիսկ, թէ որտեղ է հայրիկի գերեզմանը...*

Փողոցում երեւում է Աշոտը: Նա ձեռքով է անում, բայց տեսնելով, որ աղջիկները չեն նկատում, կռանում է ու գաղտագողի մօտենում բակի կիսաբաց դռանը:

ԱՐՓԻԿ - *Եղբայրդ...*

ՍԵԴԱ - *Աչո՛տ...* (Վեր է թռչում, վազում, թափով բացում բակի դուռը եւ դռան մէջ գրկում եղբօրը. յետոյ՝ մեղմ յանդիմանութեամբ) *Դու երէկ պիտի գայիր, ընկեր ուսանող:*

ԱՇՈՏ - *Երէկ չկարողացայ...*

ՍԵԴԱ - *Գոնէ զանգահարէիր...*

ԱՇՈՏ - *Մայրիկն անհանգստանո՞ւմ էր:*

ՍԵԴԱ - *Զգիտե՞ս մայրիկին:*

ԱՇՈՏ - *Գիտեմ, դրա համար էլ դեռ լոյսը չբացուած՝ ճանապարհ ընկայ... Տա՞նն է:*

ՍԵԴԱ - *Քիչ առաջ գնաց:*

ԱՇՈՏ - *Ոչինչ, կը գնամ մօտը:* (Մօտենում է, սեղմում Արփիկի ձեռքը): *Տքնո՞ւմ էք:*

ԱՐՓԻԿ - *Կամաց-կամաց...*

ԱՇՈՏ - (Փոքրիկ ճամպրուկից հանում է մի փաթեթ եւ կեղծ հանդիսաւորութեամբ պարզում է աղջիկներին): *Ահա ձեզ քաղցրեղէն, որ մեղմացնի ձեր տքնութեան դառնութիւնը:*

Աղջիկներն աղմուկով բացում են փաթեթը:

Արփիկը յանկարծ լարւում է ու նայում ցանկապատի կողմը: Փողոցով անցնում է անծանօթը: Բարձրահասակ մարդ է, ալեխառն, փոքր-ինչ կորացած: Քայլում է դանդաղ, ինչ-որ փնտրում է կարծես:

ԱՐՓԻԿ - *Նա է:*

ԱՇՈՏ - *Ո՞վ:*

ՍԵԴԱ - *Սպասի՛ր:* (Վազում է ցանկապատի մօտ): *Անցաւ...* (Վերադառնում է թախտի մօտ):

ԱՐՓԻԿ - *Ճանաչեցի՞ր:*

ՍԵԴԱ - *Չէ՛:*

ԱՐՓԻԿ - *Իսկապէս զարմանալի է:*

ԱՇՈՏ - *Ի՞նչ էք հանելուկներով խօսում... Ի՞նչ կայ զարմանալի: Մի մարդ անցաւ փողոցով:*

ՍԵԴԱ - *Դու տեսա՞ր այդ մարդուն:*

ԱՇՈՏ - *Տեսայ, յետոյ ի՞նչ:*

ՍԵԴԱ - *Ճանաչեցի՞ր:*

ԱԾՈՏ - *Ինչպէ՞ս կարող էի ճանաչել, երբ առաջին անգամ էի տեսնում... Ի՞նչ է, հռչակաւոր դերասա՞ն է, թէ՞ ֆուտբոլիստ, որ աչխարհն իմանայ, ես էլ նկարով ճանաչեմ:*

ՍԵԴԱ - *Է՛հ, չէ՛, չէ՛...*

ԱՐՓԻԿ - *Նա ձեր մասին էր հարցուփորձ անում:*

ԱԾՈՏ - *Յետոյ ի՞նչ:*

ՍԵԴԱ - *Յետոյ անցաւ մեր դռան մօտով ու տուն չմտաւ:*

ԱԾՈՏ - *Ու դուք էլ մի ամբողջ դէտէկտիվ պատմութիւն յօրինեցիք խորհրդաւոր անծանօթի մասին... Գուցէ գնացել է գրասենեակ՝ մայրիկի մօտ: Ամէն եկող նախագահին է դիմում:*

ՍԵԴԱ - *Գուցէ... Բայց չէ՛, չէ՛, նախագահի մօտ գնացողն ինչո՞ւ պիտի հարցնէր քո մասին, իմ մասին:*

ԱԾՈՏ - *Ճանաչել է... Կամ գուցէ պարզապէս հետաքրքրուել է՝ իմանալու համար, թէ ինչպիսի մարդ է նախագահը:*

ՍԵԴԱ - *Չէ՛, այստեղ ուրիշ բան կայ:*

ԱԾՈՏ - *Է՛հ, երեխայ... Ամէն տեղ անհասկանալի, անբացատրելի բաներ ես փնտրում:*

ՍԵԴԱ - *Չեմ ասում՝ անբացատրելի...*

ԱՐՓԻԿ - *Նա վերադառնում է:*

Ցանկապատի ետեւում երեւում է Անծանօթը, որ հետաքրքրութեամբ նայում է տան կողմը:

ՍԵԴԱ - *Այո՛, նա է:*

ԱՐՓԻԿ - *Գուցէ ներս հրաւիրենք:*

ՍԵԴԱ - *Հրաւիրենք, իհա՛րկէ:*

Անծանօթը մօտենում է բակի դռանը:

ԱՆԾԱՆՕԹ - *Բարե՛ւ ձեզ:*

ՍԵԴԱ - *Բարե՛ւ ձեզ:*

ԱՐՓԻԿ - *Բարե՛ւ ձեզ:*

ԱԾՈՏ - *Դուք որեւէ մէկի՞ն էք փնտրում:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ազատեանների տունը սա՞ է:*

ԱԾՈՏ - *Սա է, յամեցէք:* (Գնում է ընդառաջ):

ԱՐՓԻԿ - *Ես ասացի չէ՞, որ նա կը գայ:*

ՍԵՂԱ - *Դու վազիր մայրիկի մօտ, ասա՝ Աշոտը եկել է, ասա՝ մի անծանօթ մարդ էլ է եկել: Սիրտս վկայում է, որ նա մեզ մի շատ կարեւոր բան է ասելու:*

Արփիկը գլխով է անում եւ, հետաքրքրութեամբ նայելով անծանօթին, գնում է՝ հետզհետէ արագացնելով քայլերը. փողոցում սկսում է վազել:

Աշոտն ու Անծանօթը մօտենում են թախտին:

ԱՇՈՏ - *Նստեցէ՛ք, խնդրեմ:*

ԱՆԾԱՆՕԹ - *Շնորհակալութիւն:* (Նստում է եւ թաշկինակով սրբում քրտինքը): *Մի բաժակ ջուր կարելի՞ է:*

ՍԵՂԱ - *Հիմա:* (Վազում է տուն):

ԱՆԾԱՆՕԹ - *Դուք Աշո՞տն էք:*

ԱՇՈՏ - *Այո՛:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ինձ ասացին, որ դուք ուսանող էք արդէն, սովորում էք համալսարանում:*

ԱՇՈՏ - *Քիչ առաջ եկայ... Ձէ՞ որ այսօր կիրակի է:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ախ, հա՜... մոռացել էի...*

Սեղան ջուր է բերում:

ՍԵՂԱ - *Յամեցէ՛ք:*

ԱՆԾԱՆՕԹ - *Շնորհակալութիւն:* (Խմում է): *Հրաշալի ջուր է... Այս չոգին եթէ այս ջուրն էլ չլինէր...*

ՍԵՂԱ - *Ուզո՞ւմ էք ձեզ համար թթուաշ խնձորներ բերեմ: Նրանք աւելի են յագեցնում ծարաւը:*

ԱՇՈՏ - *Հայրիկի՞ ծառից:*

ՍԵՂԱ - *Ըհը՛:* (Գնում է այգու կողմը):

ԱՇՈՏ - *Հայրիկն այդ ծառը տնկել է պատերազմ գնալու տարին: Հիմա շատ մեծ ծառ է...*

ԱՆԾԱՆՕԹ - *Դուք յիշո՞ւմ էք ձեր հայրիկին:*

ԱՇՈՏ - *Ես շատ փոքր եմ եղել, երբ նա գնացել է պատերազմ եւ... Ընկել է հէնց առաջին մարտում...*

ԱՆԾԱՆՕԹ - (Մտախոհ) *Այդպէ՞ս...*

Սեղան խնձորներ է քերում:

ՍԵԴԱ - (Անձանօթին): *Կերէ՛ք, խնդրեմ... Երեւում է՝ մեր չոգերին սովոր չէք:*

ԱՆԾԱՆՕԹ - *Այո՛, սովոր չեմ: Այնտեղ, որտեղ ես եմ ապրում, երբեք չոգից գանգատուելու առիթ չի լինում:*

ՍԵԴԱ - *Ուրեմն հեռուից էք եկել:*

ԱՆԾԱՆՕԹ - *Շատ հեռուից... Դիքսօն կղզի, լսե՞լ էք:*

ՍԵԴԱ - *Դիքսօն կղզի՞... Կարծես լսել եմ... Այդ որտե՞ղ է... Արտասահմանո՞ւմ:*

ԱՇՈՏ - *Խենթուկ: Եւ դեռ աշխարհագրութիւնից գերազանց ես ստացել... Դիքսօն կղզին հեռաւոր Հիւսիսում է... Անմարդաբնակ մի սառցակտոր:*

ՍԵԴԱ - *Ցիշեցի, յիշեցի...*

ԱՆԾԱՆՕԹ - *Ինչո՞ւ անմարդաբնակ... Ինչո՞ւ սառցակտոր... Այնտեղ էլ մարդիկ են ապրում:*

ՍԵԴԱ - *Իհա՛րկէ, ապրում են:*

ԱՇՈՏ - *Մշտապէ՞ս:*

ԱՆԾԱՆՕԹ - *Մշտապէս... ինչպէս այստեղ:*

ԱՇՈՏ - *Դժուար կը լինի:*

ԱՆԾԱՆՕԹ - *Հեշտ չէ... Բայց այնտեղի կեանքն էլ իր գեղեցկութիւններն ունի: Ճիշտ է, այնտեղ այսպիսի հրաշալի խնձորներ չկան, բայց դրա փոխարէն այստեղ էլ սպիտակ արջեր չկան:*

ԱՇՈՏ - *Պարզ է, այնտեղ սպիտակ արջեր կը լինեն:*

ՍԵԴԱ - *Ազատ շրջո՞ւմ են:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ազատ:*

ՍԵԴԱ - *Սարսափելի՞ են:*

ԱՆԾԱՆՕԹ - *Բոլորովին: Գեղեցիկ են ու բարի:*

ԱՇՈՏ - *Գազանանոցում չե՞ս տեսել:*

ԱՆԾԱՆՕԹ - *Գազանանոցինն՝ ուրիշ... Հարկաւոր է տեսնել ազատութեան մէջ, բնական վիճակում... Ամէն արարածի ճանաչելու համար պէտք է տեսնել բնական վիճակում...*

ԱՇՈՏ - *Ես սիրում եմ ճանապարհորդել, դրա համար էլ աշխարհագրական ֆակուլտետն եմ ընտրել... Անցյալ տարի եղել եմ Ղազախստանում... Այս տարի էլ քննութիւններս աւարտեմ, կը գնամ որեւէ տեղ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Դիքսօն կղզի՞:*

ԱՇՈՏ - *Դիքսօն կղզին առայժմ կը սպասի: Աշխարհում շատ աւելի հետաքրքիր վայրեր կան:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ինձ թւում է՝ աշխարհի ամենահետաքրքիր վայրը մեր Դիքսօն կղզին է:*

ԱՇՈՏ - *Գուցէ ձեզ համար:*

ԱՆՇԱՆՕԹ - *Նաեւ ձեզ համար:* (Ծխախոտ է հանում):

ՍԵԴԱ - *Մի՛ ծխէք, խնձոր վերցրէք:*

Անծանօթը ծխախոտը դնում է սեղանին, մի խնձոր է վերցնում եւ նայում այնպէս, կարծես ինչ-որ բան է փնտրում կեղեւի վրայ:

ԱՇՈՏ - *Ինչո՞ւ է աշխարհի ամենահետաքրքիր վայրը Դիքսօն կղզին... նաեւ մեզ համար:*

ՍԵԴԱ - *Յետոյ կը հարցնես, թող մի հանգիստ խնձոր ուտի:*

ԱՇՈՏ - *Ներեցէ՛ք:*

ԱՆՇԱՆՕԹ - *Դուք չէ՞ք փնտրել ձեր հօր գերեզմանը:*

ՍԵԴԱ - *Փնտրել ենք, մայրիկը շատ տեղեր է դիմել...*

ԱՆՇԱՆՕԹ - *Եւ, իհա՛րկէ, չի գտել:*

ՍԵԴԱ - *Չի գտել, բայց...*

ԱՇՈՏ - *Մենք էլի կը փնտրենք:*

ՍԵԴԱ - *Այսօր ես հէնց այդ մասին էի մտածում... Կը փնտրենք ու կը գտնենք, անպայման կը գտնենք... Մի բուռ հող կը տանենք Հայաստանից, ծաղիկներ կը տանենք հայրիկի շիրմին...*

ԱՆՇԱՆՕԹ - *Ծաղիկներ...*

ՍԵԴԱ - *Ասում են՝ հայրիկը ծաղիկներ շատ էր սիրում:*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, շատ էր սիրում ծաղիկներ եւ... երեխաներ:*

ԱՇՈՏ - *Դուք ճանաչո՞ւմ էիք մեր հայրիկին:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ճանաչում էի:*

ՍԵԴԱ - *Ես ասում էի, չէ՞, միչտ ասում էի:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ի՞նչ էիք ասում:*

ՍԵԴԱ - *Ասում էի՝ հայրիկի ռազմաճակատային ընկերներից մէկնումէկը ողջ մնացած կը լինի եւ կը գտնի մեզ, անպայման կը գտնի:*

ԱՇՈՏ - *Դուք հայրիկին տեսել էք ռազմաճակատո՞ւմ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ո՛չ... Յետոյ ենք հանդիպել:*

ՍԵԴԱ - *Մի՞թէ նա չի զոհուել ռազմաճակատում...*

Գալիս է Մայրը. ակնյայտօրէն յուզուած է, անհանգիստ: Կասկածով նայում է Անծանօթին:

ՄԱՅՐ - *Բարե՛ւ ձեզ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Բարե՛ւ ձեզ:*

ՍԵԴԱ - *Մայրիկ, նա տեսել է հայրիկին:*

ՄԱՅՐ - *Տեսե՞լ է... Մի՞թէ...*

ԱՇՈՏ - *Այո՛, եւ պատերազմից յետոյ:*

ՍԵԴԱ - *Լսո՞ւմ ես, մայրիկ, հայրիկը չի զոհուել ռազմաճակատում, հայրիկը...*

ՄԱՅՐ - *Հեքիաթնե՞ր... Փոխանակ դասերդ պարապելու, զբաղւում ես զանազան պատահական մարդկանց կասկածելի լուրերով:*

ՍԵԴԱ - *Մայրիկ, ինձ թւում է՝ նա...*

ՄԱՅՐ - *Գրքերդ հաւաքիր եւ գնա տուն: Նրա հետ ես կը խոսեմ ու կը պարզեմ, թէ ինչ մարդ է, ինչու է եկել:*

ՍԵԴԱ - *Մայրի՛կ...*

ՄԱՅՐ - (Խիստ) *Գնա՛:*

Սեդան, հազիւ զսպելով արցունքները, հաւաքում է գրքերն ու տետրերը եւ գնում տուն:

ՄԱՅՐ - (Որդուն) *Ինչո՞ւ երէկ չեկար:*

ԱՇՈՏ - *Ժողով ունէինք:*

ՄԱՅՐ - *Գոնէ զանգահարէիր:*

ԱՇՈՏ - *Զհասցրի, ուշ էր:*

ՄԱՅՐ - *Լաւ, գնա հանգստացիր:*

ԱՇՈՏ - *Ո՛չ, մայրիկ, ես կը մնամ:*

ՄԱՅՐ - *Ինչո՞ւ:*

ԱՇՈՏ - *Ես ուզում եմ լսել նրան:*

ՄԱՅՐ - *Ուզում ես լսել... Բայց գուցէ նա չուզենայ խօսել քո ներկայութեամբ:* (Անծանօթին) *Ձէր ուզում, մի՞չտ է:*

ԱՇՈՏ - *Ձէ՞ր ուզում:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ես Դիքսօն կղզուց հասել եմ այստեղ, որ խօսեմ ձեզ հետ եւ ձեր քրոջ:*

ԱՇՈՏ - *Լսո՞ւմ ես, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Ես թոյլ չեմ տայ պղտորել իմ երեխաների միտքը:*

ԱՆԾԱՆՕԹ - *Ես ուզում եմ պարզել նրանց միտքը:*

ՄԱՅՐ - *Ինչո՞ւ էք խառնւում ուրիշների կեանքին, ի՞նչ իրաւունքով:*

ԱՆԾԱՆՕԹ - *Երեխաները պէտք է իմանան ճշմարտութիւնը իրենց հօր մասին:*

ՄԱՅՐ - *Ամբողջ ճշմարտութիւնը յայտնի է նրանց:*

ԱՆԾԱՆՕԹ - *Մի՞թէ:*

ՄԱՅՐ - *Այո՛: Նրանց հայրը հերոսի մահով մեռել է ռազմաճակատում: Նրանք հպարտանում են իրենց հօրով:*

ԱՆԾԱՆՕԹ - *Նրանք կարող են եւ պէտք է հպարտանան իրենց հօրով... Բայց մի՞թէ դրա համար անհրաժեշտ է, որ հայրն մեռած լինի ռազմաճակատում, հերոսի մահով: Ձէ՞ որ հերոսական մահից բացի կայ նաեւ հերոսական կեանք... երբ մարդը հերոսի նման է ապրում իր ամբողջ կեանքը, իւրաքանչիւր տարին, օրը...*

ԱՇՈՏ - *Այո՛, կայ հերոսական կեանք:*

ԱՆԾԱՆՕԹ - *Եւ այդպիսի կեանքով է ապրել ձեր հայրը:*

ԱՇՈՏ - *Բայց դուք չասացիք, թէ որտեղ էք տեսել նրան:*

ԱՆԾԱՆՕԹ - *Դիքսօն կղզում:*

ԱՇՈՏ - *Դիքսօն կղզո՞ւմ:*

ԱՆԾԱՆՕԹ - *Այո՛, պատերազմից յետոյ նա երկար տարիներ ապրում էր Դիքսօն կղզում:*

ԱԾՈՏ - *Բայց ինչո՞ւ է նա գնայել Դիքսոն կղզին, ինչո՞ւ տուն չի վերադարձել:*

ԱՆԾԱՆՕԹ - *Հարցրէք ձեր մօրը:*

ՄԱՅՐ - *Լռեցէ՛ք, ի սէր Աստծու:*

ԱԾՈՏ - *Մայրիկ, ինչո՞ւ հայրիկը տուն չի վերադարձել:*

ՄԱՅՐ - *Մի՛ հաւատա նրան:*

ԱԾՈՏ - *Ինչո՞ւ հայրիկը տուն չի վերադարձել:*

ՄԱՅՐ - *Ձեր հայրը գոհունակ է ռադմանականում:*

ԱԾՈՏ - *Ինչո՞ւ հայրիկը տուն չի վերադարձել:*

ՄԱՅՐ - *Բաւական է:*

ԱԾՈՏ - *Ես պէտք է իմանամ, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Հաւատա՛ ինձ... Ձէ՞ որ մինչև հիմա հաւատացել ես... Մի՞թէ պատահական մի մարդ, որին առաջին անգամ ես տեսնում, կարող է խոսիտել քո հաւատը հարազատ մօրդ նկատմամբ:*

ԱԾՈՏ - *Ես պէտք է իմանամ ճշմարտութիւնը հօրս մասին:*

ՄԱՅՐ - *Ճշմարտութիւնը...*

ԱԾՈՏ - *Այո՛, ճշմարտութիւնը, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Բայց դու հասկանո՞ւմ ես, յիմար տղայ, ես ձեր մասին էլի մտածում: Ես չէի ուզում, որ ձեզ վրայ ստուեր ընկնի:*

ԱԾՈՏ - *Ստուե՞ր... Ի՞նչ ստուեր... Ինչո՞ւ...*

ՄԱՅՐ - (Թշնամաբար նայելով Անծանօթին): *Թող նա բացատրի, եթէ արդէն սկսել է:*

ԱՆԾԱՆՕԹ - *Կը բացատրեմ... Ես պարտաւոր եմ բացատրել... Ես խօսք ես տուել...*

ԱԾՈՏ - *Հայրիկի՞ն:*

Բակ է մտնում Արփիկը եւ լուռ կանգնում նրանցից քիչ հեռու:

ԱՆԾԱՆՕԹ - *Այո՛: Ձեր հայրը չի գոհունակ ռադմանականում: Պատերազմից յետոյ նա ապրել է երկար տարիներ... միշտ յիշելով ձեզ, կարօտելով ձեզ՝ մինչև վերջին վայրկեանը...*

ԱՐՓԻԿ - *Ինչ էք ասում...*

ՄԱՅՐ - (Շրջուելով) *Դու այստե՞ղ ես:*

ԱՐՓԻԿ - *Նոր եկայ... պարապելու:*

ՄԱՅՐ - *Ես Սեղային կ'ուղարկեմ ձեր տուն... Այսօր մեզ մօտ չէր կարող պարապել... Հիւր ունենք:*

ԱՐՓԻԿ - *Լաւ, ես գնամ... Յտեսութիւն...* (Գնում է՝ շուտ-շուտ ետ նայելով):

ՄԱՅՐ - *Հիմա կը տարածի գիւղով մէկ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Իսկ դուք ինչո՞ւ էիր կարծում, թէ անվերջ կարելի է թաքցնել ճչմարտութիւնը:*

ՄԱՅՐ - *Իսկ ո՞ւմ էր հարկաւոր ձեր այդ ճչմարտութիւնը, ո՞ւմ էր հարկաւոր:*

ԱՇՈՏ - *Մեզ էր հարկաւոր: Եթէ մենք իմանայինք, որ ինչ-որ տեղ, թէկուզ աշխարհի ծայրում ապրում է մեր հայրը... ոտքով էլ լինէր, կը գնայինք, կը հասնէինք նրա մօտ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Նա էլ էր հաւատում, որ եթէ իմանար, կը գար... Եւ այդ հաւատով լի էին նրա վերջին խօսքերը:*

ԱՇՈՏ - *Ուրեմն հայրիկը...*

ԱՆՇԱՆՕԹ - *Նա մահացաւ երկու ամիս առաջ, իմ ձեռքերի վրայ:*

ԱՇՈՏ - *Երկու ամիս...*

ԱՆՇԱՆՕԹ - *Եթէ մի փիչ էլ ապրէր, նա ինքը կը գար ձեզ տեսնելու... Արդէն համոզել էինք... Նա պատրաստւում էր գալու, բայց չհասցրեց...*

ԱՇՈՏ - *Իսկ ինչո՞ւ, ինչո՞ւ շուտ չէր գալիս:*

ԱՆՇԱՆՕԹ - *Նրան համոզել էին, որ եթէ գայ, ստուեր կը գցի իր երեխաների վրայ:*

ԱՇՈՏ - *Ո՞վ էր համոզել:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ձեր մայրը:*

ԱՇՈՏ - *Ե՞րբ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Պատերազմից յետոյ:*

ԱՇՈՏ - *Պատերազմից յետո՞յ... Մայրիկ, ուրեմն դու տեսել ես նրան պատերազմից յետոյ:*

ՄԱՅՐ - *Դու, ի՞նչ է, ինձ հարցաքննո՞ւմ ես:*

ԱՇՈՏ - *Դու տեսե՞լ ես նրան, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Տեսել եմ, յետոյ ի՞նչ:*

ԱՇՈՏ - *Ե՞րբ:*

ՄԱՅՐ - *Քառասունհինգ թուականի աշնանը:*

ԱՇՈՏ - *Ուրեմն պատերազմից յետոյ նա տուն է եկել: Իսկ մենք... մենք ինչո՞ւ չենք տեսել նրան:*

ՄԱՅՐ - *Դուք փոքր էիք... չէք յիշում:*

ԱՇՈՏ - *Ո՛չ, մայրիկ, եթէ տեսած լինէինք, չէինք մոռանայ: Մենք չենք տեսել հայրիկին:*

ՄԱՅՐ - *Այո՛, դուք չէք տեսել:*

ԱՇՈՏ - *Ինչո՞ւ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, դուք չէք տեսել:*

ԱՇՈՏ - *Ինչո՞ւ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ձեր հայրը տուն է հասել գիշերը: Դուք քնած էք եղել: Նա տանից հեռացել է լուսածեգին: Դուք դարձեալ քնած էք եղել:*

ԱՇՈՏ - *Իսկ ինչո՞ւ է հեռացել:*

ԱՆՇԱՆՕԹ - *Որովհետեւ ձեր մայրը համոզել է, թէ մնալով նա ստուեր կը գցի ձեզ վրայ:*

ԱՇՈՏ - *Ինչո՞ւ:*

ՄԱՅՐ - *Նա գալիս էր ֆաշիստական գերութիւնից, հասկանո՞ւմ ես, գերութիւնից:*

ԱՇՈՏ - *Գերութիւնի՞ց... Յետոյ ի՞նչ:*

ՄԱՅՐ - *Իսկ ես ուզում էի, որ իմ երեխաները հպարտանան իրենց հօրով, հպարտանալու իրաւունք ունենան:*

ԱՆՇԱՆՕԹ - *Միայն երեխանե՞րը:*

ՄԱՅՐ - *Ես՝ նոյնպէս:*

ԱՆՇԱՆՕԹ - *Որովհետեւ վախենում էիք կորցնել ձեր պաշտօնը, ձեր դիրքը: Պատերազմի ժամանակ կօլտնտեսութեան[2] նախագահ էիք դարձել, սպասում էիք չքանչանի...*

ՄԱՅՐ - *Իմ դիրքը հարկաւոր էր երեխաներին:*

ԱՆՇԱՆՕԹ - *Աւելի՞, քան հայրը:*

ԱՇՈՏ - *Ինչե՞ր ես արել, մայրիկ...*

ԱՆՇԱՆՕԹ - *Դուք դատապարտել էք նրան՝ առանց քննելու եւ*

դատելու... Ձէ՞ք էլ հարցրել, թէ ինչպէս է կռուել, ինչպէս է գերի ընկել, ինչպէս է իրեն պահել գերութեան մէջ:

ՄԱՅՐ - *Հիմա հեչտ է խօսել այդ մասին:*

ԱՇՈՏ - *Իսկ ա՞յն ժամանակ...*

ՄԱՅՐ - *Դու չգիտես, չես իմանայ...* (Անծանօթին) *Մի՞թէ ձեզ չեն սովորեցրել, թէ ինչի համար պիտի պահի հայրենիքի զինուորն իր վերջին փամփուշտը:*

ԱՆԾԱՆՕԹ - *Սովորեցրել են:*

ՄԱՅՐ - *Էլ ինչո՞ւ էք ինձ մեղադրում:*

ԱՇՈՏ - *Վերջին փամփուշտը... Մի՞թէ հայրիկը սխալ է արել, որ ապրել է:*

ՄԱՅՐ - *Այն ժամանակ ես այդպէս էի հաւատացած... եւ ինքն էլ: Ես նրան չստիպեցի: Ինքը համաձայնեց հեռանալ... Ինքն ասաց՝ այդպէս աւելի լաւ կը լինի:*

ԱՇՈՏ - *Իսկ դու չփորձեցիր պահել նրան:*

ՄԱՅՐ - *Ձեզ համար:*

Սանդուղքների վրայ երեւում է Սեդան՝ յուզուած ու այլայլուած, դանդաղ իջնում է:

ԱՇՈՏ - *Իսկ ինչո՞ւ մեզ չէիր ասում:*

ՄԱՅՐ - *Դուք փոքր էիք, ի՞նչ պիտի հասկանայիք:*

ԱՇՈՏ - *Իսկ յետո՞յ... չէ՞ որ մեծացանք:*

ՄԱՅՐ - *Յետո՞յ... Ի՞նչ կարիք կար պղտորելու ձեր սիրտը: Ձէ՞ որ դուք հաշտուել էիք այն մտքի հետ, որ ձեր հայրը հերոսի մահով ընկել է ռազմաճակատում:*

ԱՇՈՏ - *Հաշտուե՞լ էինք:*

ՍԵԴԱ - (Մօտենում է, կանգնում մօր առաջ) *Ո՛չ, մայրիկ, չէինք հաշտուել:*

ՄԱՅՐ - *Դու ինչո՞ւ եկար:*

ՍԵԴԱ - *Ես ամէն ինչ լսեցի, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Յետո՞յ:*

ՍԵԴԱ - *Դու չպէտք է մեզանից թաքցնէիր:*

ՄԱՅՐ - *Դո՞ւ էլ ես ինձ մեղադրում... Ախր ես ամբողջ կեանքս*

մաչել եմ ձեզ համար, ձեր ապագայի համար... ջահէլութիւնս... առողջութիւնս... ես ամբողջովին այրուեցի աշխատանքում... ձեզ համար: Ո՛չ քուն ունէի, ո՛չ հանգստութիւն...

ԱՇՈՏ - *Բայց դու ինչպէ՞ս կարողացար մեր ապրող հօր անունը փորագրել տալ գոհուած մարտիկների յուշարձանին:*

ՍԵԴԱ - *Եւ թաքցնել մեզանից, թաքցնել մեր հօրը:*

ԱՇՈՏ - *Ամբողջ տասնեօթ տարի...*

ՄԱՅՐ - *Թաքցնել... Եւ դուք հաւատում էք, թէ կարելի է թաքցրնել ապրող մարդուն... Ձեր հայրը գիտէր, թէ որտեղ էք դուք: Եթէ չատ էր ցանկանում, կարող էր ձեզ հետ կապուելու ճանապարհ գտնել:*

ԱՆՇԱՆՕԹ - *Նա գրում էր...*

ԱՇՈՏ - *Իսկ մենք ոչ մի նամակ չենք ստացել:*

ՍԵԴԱ - *Գրո՞ւմ էր...*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, գրում էր, դժուարութեամբ, տառապանքով, բայց գրում էր եւ... պատասխան չէր ստանում:*

ԱՇՈՏ - *Մի՞թէ, մայրիկ, դու ստանում էիր նամակները եւ թաքցնում էիր մեզանից:*

ՄԱՅՐ - *Եթէ չատ էր ցանկանում, նա ինքը կարող էր գալ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Նա չատ էր ցանկանում... Երազում էր...*

ՄԱՅՐ - *Իսկ ինչո՞ւ չէր գալիս:*

ԱՆՇԱՆՕԹ - *Սպասում էր:*

ՄԱՅՐ - *Ինչի՞:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ահա թէ ինչի:* (Գրպանից հանում է մի փոքրիկ տուփ եւ յանձնում Աշոտին):

ԱՇՈՏ - (Բացում է տուփը) *Շքանշա՞ն:*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, մարտական շքանշան:*

ՍԵԴԱ - *Հայրի՞կն է ստացել:*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, ձեր հայրիկը:*

ՄԱՅՐ - *Ինչի՞ համար:*

ԱՆՇԱՆՕԹ - *Պատերազմում ցուցաբերած խիզախութեան:*

ՄԱՅՐ - *Բայց...*

ԱՆՇԱՆՕԹ - *Նա ֆաշիստական գերութեան մէջ էլ չի յանձ-*

նուել, մինչեւ վերջ պայքարել է... Իսկ դա աւելի դժուար է... Ամբողջ պատերազմի ընթացքում ես եղել եմ ռազմաճակատում եւ կարող եմ ասել, որ հեշտ է կռուել, երբ չուրջդ մարտական ընկերներ են ու բարեկամներ... Իսկ նա մենակ է եղել թշնամիների մէջ:

ՍԵԴԱ - *Մենակ... թշնամիների մէջ...*

ՄԱՅՐ - *Ե՞րբ է ստացել այդ շքանշանը:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ուշ է ստացել... մահուանից երկու օր առաջ:*

ՄԱՅՐ - *Եթէ ես իմանայի...*

ԱՇՈՏ - *Իսկ ինչո՞ւ այդքան ուշ:*

ԱՆՇԱՆՕԹ - *Պատերազմն ու ժամանակը շատ թելեր էին խառնել ու խճճել... Ոմանք առանց ծառայութեան հերոս էին հռչակուել, իսկ շատ հերոսներ, որ պայքարել էին անձնուիրաբար, մնացել էին ոչ միայն անյայտ, այլեւ՝ ստուերում, սեփական մեղքի ծանր գիտակցութեամբ, չգործած յանցանքի... Ժամանակ էր հարկաւոր՝ բացելու համար ժամանակի խճճած թելերը...*

ՄԱՅՐ - *Շատ երկար ժամանակ... ամբողջ մի կեանք...* (Թուլացած ընկնում է աթոռին եւ գլուխն առնում ափերի մէջ):

ԱՇՈՏ - *Ամբողջ մի կեանք...*

ՍԵԴԱ - *Պատմէ՛ք, պատմէ՛ք հայրիկի մասին:*

ԱՆՇԱՆՕԹ - *Ես կարող եմ ձեր հօր մասին պատմել չարաթներ չարունակ... Նա եղել է իմ լաւագոյն բարեկամը, դժուար օրերի լաւագոյն բարեկամը. երբ բարեկամութիւնն ստուգում է իւրաքանչիւր քայլափոխում... Ուժեղ մարդ էր նա, ամուր, բայց երբ երեխայ էր տեսնում, աչքերը խոնաւանում էին... Նա շատ է պատմել ձեր մասին՝ երկար ճանապարհին, երկար գիշերները... Նա մտովի միշտ ձեզ հետ էր, երազում էր...*

ՍԵԴԱ - *Իսկ ի՞նչ էր անում նա Դիքսօն կղզում:*

ԱՆՇԱՆՕԹ - *Աշխատում էր՝ ինչպէս բոլորը: Լաւ մեխանիկ էր:*

ԱՇՈՏ - *Գիւղում էլ է մեխանիկ եղել:*

ՍԵԴԱ - *Իսկ ռազմաճակատում՝ տանկիստ:*

ԱՆԾԱՆՕԹ - *Գերմանացիները նրան հանել են այրուող տանկից... Նա վիրաւոր է եղել, ուշագնաց... Մինչեւ խփուելը նրա տանկը մեծ սխրանքներ է կատարել, ոչնչացրել է ֆաշիստական երեք տանկ, մի քանի հրանօթ...*

ԱՇՈՏ - *Դու այդ գիտէ՞ր, մայրիկ:*

ՄԱՅՐ - *Նա պատմում էր... այն դիշեր:*

ԱՆԾԱՆՕԹ - *Իսկ դուք չէիք հաւատում:*

ՄԱՅՐ - *Ես չեմ ասել, թէ չեմ հաւատում:*

ԱՆԾԱՆՕԹ - *Դուք չէք ասել, բայց նա հասկացել է, զգացել... Եթէ դուք հաւատայիք նրան...*

ՍԵԴԱ - *Ախ, մայրիկ...*

ԱՇՈՏ - *Պատմէ՛ք, պատմէք Դիքսօն կղզու կեանքից:*

ԱՆԾԱՆՕԹ - *Պատմելու բան չատ կայ, չգիտեմ ինչից սկսեմ:*

ՍԵԴԱ - *Թէկուզ մի դէպք:*

ԱՆԾԱՆՕԹ - *Մի դէպք... Բայց ո՞րը... Այնքան չատ են դէպքերը, որ մեզ կապում են...*

ՍԵԴԱ - *Դէ... երբ դժուար է եղել:*

ԱՆԾԱՆՕԹ - *Շատ անգամներ է դժուար եղել...* (Միջոց): *Մի անգամ մոլորուեցինք ձիւնէ հարթավայրում: Երկու օր չարունակ քայլում էինք... Երրորդ օրը ես թուլացայ, յուսահատուեցի... Գնա՛, ասացի նրան, դու դեռ ուժ ունես, կարող ես քայլել, կեանքդ փրկիր:*

ՍԵԴԱ - *Իսկ հայրի՞կը...*

ԱՆԾԱՆՕԹ - *Իսկ ձեր հայրիկն ասաց՝ ո՛չ մի դէպքում: Կամ կը փրկուենք երկուսով, կամ երկուսս էլ կը կորչենք: Բայց քանի որ ես չեմ կարող մեռնել՝ առանց մի անգամ էլ երեխաներիս տեսնելու, ուրեմն երկուսս էլ պիտի փրկուենք...*

ՄԱՅՐ - *Այդ նման է նրան, նման է նրան... Նա բիւրեղի պէս մարդ էր...* (Հեկեկում է):

ԱՆԾԱՆՕԹ - *Հանգստացէ՛ք, հանգստացէ՛ք... Հիմա էլ չեն օգնի ուշացած արցունքները:*

ՄԱՅՐ - *Այս արցունքներն իմ սրտում են եղել տասնեօթ տարի, ամբողջ տասնեօթ տարի... Դուք կարծում էք ես քա՞ր եմ,*

սիրտ չկա՞յ կրծքիս տակ... Կարծում էք ես չե՞մ մտածել նրա մասին, չե՞մ տխրել, չե՞մ կարոտել... Ո՞վ կարող է հասկանալ, թէ ինչքան դժուար է եղել ինձ համար, ինչքան ծանր է եղել այդ բեռը... Զէ՞ որ ես սիրել եմ նրան, սիրում էի, սիրում եմ... Եթէ հնարաւոր լինէր նորից ապրել սխալ ապրած տարիները... (Հեկեկալով, արագ գնում է տուն):

ՍԵԴԱ - *Մայրիկ...* (Ուզում է հետեւել մօրը):

ԱՆԾԱՆՕԹ - *Հանգիստ թողէք ձեր մօրը: Հիմա նրան հարկաւոր է լաց լինել:*

ԱԾՈՏ - *Նա երբեք լաց չի եղել... Նոյնիսկ ամենադժուար տարիներին:*

ԱՆԾԱՆՕԹ - *Իսկ դուք ի՞նչ գիտէք... Դուք հանգիստ քնել էք գիշերները: Մի՛ կարծէք, թէ նրա համար հեշտ է եղել:*

ՍԵԴԱ - *Սիրել եւ ամրողջ տասնեօթ տարի մեռած համարել իր կենդանի սէրը...*

ԱԾՈՏ - *Տասնեօթ տարի թաքնուել, թաքցնել...*

ԱՆԾԱՆՕԹ - *Դուք դեռ չատ էք ջահէլ, գուցէ հիմա լաւ չհասկանաք: Ամենածանրը կեանքում այն է, երբ մարդ հաշտ չի լինում իր խղճի հետ:*

ԱԾՈՏ - *Դուք դարձեա՞լ գնալու էք Դիքսօն կղզի:*

ԱՆԾԱՆՕԹ - *Երեք չաբաթից վերջանում է իմ արձակուրդը:*

ԱԾՈՏ - *Երեք չաբաթից ես կը վերջացնեմ քննութիւնները:*

ՍԵԴԱ - *Ես էլ:*

ԱԾՈՏ - (Անծանօթին) *Մենք կը գանք ձեզ հետ:*

ՍԵԴԱ - *Այո՛, մի բուռ հող կը տանենք Հայաստանից, ծաղիկներ կը տանենք...*

ԱՆԾԱՆՕԹ - *Ես այդ յոյսով էլ գալիս էի:*

ՍԵԴԱ - *Իսկ մայրի՞կը...*

ԱԾՈՏ - *Զգիտեմ: Բայց մենք կը գնանք:*

ԱՆԾԱՆՕԹ - *Նա խօսում էր սխալ ապրած տարիների մասին:*

ՍԵԴԱ - *Մի ժամ առաջ ես չգիտէի, որ աշխարհում գոյութիւն ունի Դիքսօն կղզի...*

ԱԾՈՏ - *Իսկ ես կարծում էի անկեանք մի սառցակտոր է բեւեռային ջրերում:*

ՍԵԴԱ - *Եւ հիմա յանկարծ դարձաւ աշխարհի ամենահարա-դատ վայրը մեզ համար:*

ԱՇՈՏ - *Դիքսօն կզգին...*

ԱՆՇԱՆՕԹ - *Այո՛, Դիքսօն կզգին...*